10401
ОТЕЛЬНЫЙ ЭКЗЕМПЛЯР
24 SEP 2006
09 DEC 2009

ՐԱՀԱՆԳ

ՂԵԿԱՎԱՐ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀԱՄԼԿՅԵՄ Կենտկոմի յերրորդ պլենումի վորոշման համապատասխան ղեկավար կոմյերիտական որգանների ընտրությունների ժամանակ արգելվում է ցուցակով քվեարկելը։ Քվեարկումը պետք է կատարվի ըստ առանձին թեկնածությունների, ընդվորում ՀԱՄԼԿՅԵՄ բոլոր անդամների համար ապահովվում է թեկնածուներին բացարկելու և վերջիններիս քննադատելու անսահմանափակ իրավունքը։ Ընտրություններն անց են կացվում թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկությամբ։

2. Փակ (գաղտնի) քվեարկությամբ ընտրվում են.—

ա) սկզբնական կոմյերիտական կազմակերպություններից դելեգատներ՝ շրջանային, քաղաքային կոմյերիտական կոնֆերանսների համար և շրջանային, քաղաքային, ոկրուգային կոմյերիտական կոնֆերանսներից դելեգատներ՝ մարզային, յերկրամասային կոմյերիտական կոնֆերանսների ու միութենական հանրապետությունների կոմյերիտմիության համագումարների համար.

բ) սկզբնական կոմյերիտական կազմակերպությունների կոմիտեների անդամները, ինչպես նաև քարտուղարները (այնտեղ, վորտեղ կոմիտեներ չկան) և նրանց տեղակալները։

22077-59
Ա.
3530
ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՀ

01.06.2013

10401

գ) ցեխային և դրանց հավասարեցրած կազմակերպությունների բյուրոների անդամներն ու կոմյերիտակազմակերպիչները (այնտեղ, որտեղ բյուրոներ չկան).

դ) կոմյերիտական խմբակների խմբակազմակերպիչները.

յե) կոմյերիտմիության շրջկոմների, քաղկոմների, ոկրուգային կոմիտեների, մարզկոմների, յերկրկոմների և միութենական հանրապետությունների կոմյերիտմիության կենտկոմների անդամները և վերստուգիչ հանձնաժողովների անդամները։

3. Բաց քվեարկությամբ ընտրվում են.—

ա) սկզբնական կոմյերիտական կազմակերպությունների կոմիտեների քարտուղարները և նրանց տեղակալները՝ կոմիտեների նիստերում.

բ) կոմյերիտակազմակերպությունների ցեխային ու դրանց հավասարեցված կազմակերպությունների քարտուղարները՝ բյուրոների նիստերում.

գ) կոմյերիտմիության շրջկոմների, քաղկոմների, ոկրուգային կոմիտեների, մարզկոմների, յերկրկոմների, միութենական հանրապետությունների կենտկոմների քարտուղարները և բյուրոների անդամները, համապատասխան կոմիտեների պլենումներում։

4. Սկզբնական կոմյերիտակազմակերպություններում կոմիտեների քարտուղարների (այնտեղ, որտեղ կոմիտե չկա) և նրանց տեղակալների ընտրությունները կատարվում են ընդհանուր կոմյերիտական ժողովներում։

Հազարից ավելի անդամ ունեցող սկզբնական կոմյերիտակազմակերպություններում գործարանային, ֆաբրիկային կամ բուհական կոմիտեների ընտրությունները կարող են յուրաքանչյուր առանձին դեպքում ՀամԼԿՅԵՄ մարզկոմների, յերկրկոմների ու միութենական հանրապետությունների կոմյերիտմիության կենտկոմների թույլտվությամբ անցկացվել համագործարանային, ֆաբրիկային կամ բուհական կոմյերիտական կոնֆերանսներում։ Համագործարանային, ֆաբրիկային կամ բուհական կոմյերիտկոնֆերանսների համար ներկայացուցչության նորմաները հաստատում է կոմյերիտմիության քաղկոմը, շրջկոմը։

Ցեխային և նրանց հավասարեցված կազմակերպությունների բյուրոների և քարտուղարների (այնտեղ, որտեղ բյուրոներ չկան), ինչպես նաև կոմյերիտական խմբակների խմբակազմակերպիչների ընտրություններն անց են կացվում մինչև սկզբնական կոմյերիտակազմակերպության կոմիտեների կամ կոմյերիտմիության գործարանային, ֆաբրիկային, բուհական կոմիտեյի ընտրությունները։

5. Շրջանային կոմյերիտակազմակերպություններում կոմյերիտմիության շրջկոմների ընտրություններն անց են կացվում կոմյերիտական շրջանային կոնֆերանսներում, կամ կոմյերիտմիության մարզկոմի, յերկրկոմի, միութենական հանրապետության կենտկոմի հետ համաձայնեցնելով՝ ՀամԼԿՅԵՄ անդամների համաշրջանային ժողովներում։

Քաղաքային, ոկրուգային, մարզային, յերկրամասային կոմյերիտակազմակերպություններում կոմյերիտմիության քաղկոմների, ոկրուգային կոմիտեների, մարզկոմների, յերկրկոմների ընտրություններն անց են կացվում համապատասխանաբար քաղաքային, մարզային, յերկրամասային կոմյերիտական կոնֆերանսներում, իսկ հանրապետական կոմյերիտական կազմակերպություններում միութենական հանրապետության կոմյերիտմիության կենտկոմի ընտրություն-

ները՝ միութենական հանրապետությունների կոմյերիմիության համագումարներում։

Կոմյերիմիության շրջանային, քաղաքային, ուկրուգային, մարզային, յերկրամասային կոմյերիտական կոնֆերանսների և միութենական հանրապետությունների համագումարների համար ներկայացուցչության նորմաները համապատասխանաբար սահմանում են կոմյերիմիության շրջկոմները, քաղկոմները, ուկրուգային կոմիտեները, մարզկոմները, յերկրկոմները և միութենական հանրապետությունների կենտկոմները։

Քաղաքային կոմյերիտական խոշոր կազմակերպություններում, վորտեղ կա շրջանային բաժանում, մարզային, յերկրամասային կոմյերիտական կոնֆերանսների և միութենական հանրապետությունների կոմյերիմիության համագումարների համար դելեգատների ընտրությունները կոմյերիմիության մարզկոմների, յերկրկոմների, միութենական հանրապետությունների կենտկոմների վորոշումով կարող են անցկացվել անմիջականորեն կոմյերիտական շրջանային կոնֆերանսներում։

6. Կոմյերիտական ժողովի, կոնֆերանսի, համագումարի նախագահությունը և մյուս ղեկավար որգաններն ընտրվում են բաց քվեարկությամբ՝ հենց ժողովի, կոնֆերանսի, համագումարի կողմից վորոշված թվով։

Կոմյերիտական կոնֆերանսի, համագումարի ղեկավար որգաններում կարող են ընտրվել նաև խորհրդակցական ձայնի իրավունքով դելեգատները։

7. Ղեկավար կոմյերիտական որգանների ընտրությունները կատարվում են համապատասխան կոմյերիտական կոմիտեյի և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետու ղեկուցման շուրջը ժողովի, կոնֆերանսի,

համագումարի կողմից վորոշում լսելուց, քննարկելուց և ընդունելուց հետո։

Կոմյերիտական ղեկավար որգանների հաշվետվությունները նախապես քննարկվում են կոմյերիմիության համապատասխան կոմիտեների պլենումներում, իսկ սկզբնական կոմյերիտկազմակերպություններում — սկզբնական կոմյերիտական կազմակերպությունների կոմիտեներում։

Կոմյերիմիության կոմիտեների պլենումներում, սկզբնական կոմյերիտկազմակերպությունների կոմիտեներում, հաշվետու ղեկուցումների նախնական քննարկումն այդ կոմյերիտական որգանների անդամներին չի զրկում կոմյերիտական ժողովներում, կոնֆերանսներում և համագումարներում կոմյերիտկազմակերպության ղեկավարությանը քննադատելու դուրս գալու իրավունքից։

8. Ընտրություններն անցկացնելուց առաջ կոմյերիտական ժողովը, կոնֆերանսը, համագումարը սահմանում է ընտրվող կոմյերիտորգանների անդամների և թեկնածուների քանակը։

9. Ղեկավար կոմյերիտական որգանի նոր կազմում թեկնածուներն առաջադրում են կոմյերիտական ժողովների մասնակիցները, կոնֆերանսների, համագումարների դելեգատները և անհատապես քննարկվում են անմիջականորեն բուն կոմյերիտական ժողովում, կոնֆերանսում, համագումարում (կոմյերիտական որգանի անդամության և թեկնածության համար առանձին-առանձին)։

Բոլոր առաջադրված թեկնածությունների անհատական քննարկման հետևանքով կազմվում է թեկնա-

ծուների ցուցակը ընտրությունները փակ (գաղտնի) քվեարկությամբ անցկացնելու համար։

Ժողովի յուրաքանչյուր մասնակցի, կոնֆերանսի, համագումարի դելեգատին, վորը ցանկանում է այս կամ այն թեկնածությունն առաջադրել ղեկավար կոմյերիտական որգանի կազմում, ժողովի, կոնֆերանսի, համագումարի նախագահությունը խոսքը տալիս է թեկնածության մասին առաջարկություն մտցնելու համար և այդ առաջարկությունը հիմնավորելու համար։ Այն դեպքում, յեթե առաջարկություն է ստացվում թեկնածություններ առաջադրելը դադարեցնելու մասին, ժողովի, կոնֆերանսի, համագումարի նախագահությունն այդ առաջարկությունը դնում է ժողովի, կոնֆերանսի, համագումարի վորոշմանը և բաց քվեարկությամբ լուծվում է այդ հարցը՝ շարունակել, թե դադարեցնել նոր թեկնածությունների դրանցումը։

Նոր ընտրվող ղեկավար կոմյերիտական որգանի կազմի մեջ կարող են թեկնածություններ առաջադրվել կոմյերիտական կոնֆերանսի, համագումարի խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող դելեգատներից, ինչպես նաև ՀԱՄԼԿՅԵՄ այն անդամներից, վորոնք տվյալ կոմյերիտական կոնֆերանսի, համագումարի դելեգատներ չեն։

10. Շրջանային, քաղաքային, ոկրուգային, մարզային, յերկրամասային կոմյերիտական կոնֆերանսներում և միութենական հանրապետությունների կոմյերիտմիության համագումարներում, կոնֆերանսի կամ համագումարի նախագահության վորոշումով, կարող են գումարվել դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցություններ՝ կոմյերիտական որգանի նոր կազմի մեջ թեկնածություններ նշելու համար։

Այն թեկնածությունները, վորոնք կոմյերիտական որգանի նոր կազմի մեջ առաջադրվում են դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցությունում, նախնական կարգով քննարկվում են խորհրդակցության մասնակիցների կողմից և ըստ յուրաքանչյուր թեկնածության առանձին-առանձին բաց քվեարկությամբ լուծվում է այն թեկնածությունների ցուցակի մեջ մտցնելու կամ չմտցնելու հարցը, վոր նշում է դելեգացիաների ներկայացուցիչների ժողովը։

Դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցության կողմից նշված թեկնածություններն առաջադրվում են կոմյերիտական կոնֆերանսի, համագումարի նիստում՝ այդ խորհրդակցության անունից և անհատական ընդհանուր կարգով քննարկվում են կոմյերիտական կոնֆերանսի, համագումարի պլենար նիստում։

Դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցությունում կոմյերիտական որգանի նոր կազմի մեջ թեկնածությունների նախնական նշումը չի սահմանափակում դելեգատների իրավունքները թեկնածություններ նշելիս և քննարկելիս հենց կոմյերիտական կոնֆերանսում, համագումարում, այսինքն յուրաքանչյուր դելեգատ կոնֆերանսի պլենար նիստում կարող է լրացուցիչ կերպով թեկնածություն առաջադրել կոմյերիտական որգանի կազմի մեջ։

11. Կոմյերիտական որգանի կազմում առաջադրված բոլոր թեկնածությունների քննարկումը կատարվում է այն կարգով, ինչ կարգով դրանք գրանցված են յեղել, նայած կոմյերիտական ժողովի, կոնֆերանսի, համագումարի նախագահությունում դրանց ստացմանը։

Թեկնածուներն անհատականորեն քննարկելիս պետք է ապահովվի կոմերիտական որդանի կազմի մեջ առաջադրված թեկնածուների բացարկման անսահմանափակ իրավունքը, այդ թվում նաև դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցության կողմից նշվող թեկնածուների, այսինքն յուրաքանչյուր դելեգատ կարող է բացարկել ուզած թվով առաջադրված թեկնածուներ և յուրաքանչյուր առաջադրված թեկնածության վերաբերյալ կարող են արտահայտվել անսահմանափակ թվով դելեգատներ, ինչպես «թեր», այնպես էլ «դեմ»։

Այն դեպքում, երբ առաջարկություն է ստացվում դադարեցնելու այս կամ այն թեկնածության քննարկումը, ժողովը, կոնֆերանսը, համագումարը բաց քվեարկությամբ լուծում է տվյալ թեկնածության քննարկումը դադարեցնելու կամ շարունակելու հարցը։

Կոմերիտական կոնֆերանսի, համագումարի խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող դելեգատները և ՀԱՄԼԿՅԵՄ՝ անդամության թեկնածուներն սկզբնական կոմերիտկազմակերպությունների ժողովներում և կոմերիտական շրջանային ժողովներում կոմերիտական որդանի կազմի մեջ թեկնածությունները քննարկելիս ոգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով։

12. Այն թեկնածությունները քննարկելուց հետո, վորոնց դեմ ստացվում են բացարկումներ, անհրաժեշտ է յուրաքանչյուր առանձին դեպքում բաց քվեարկության կարգով լուծել տվյալ թեկնածությունը ցուցակի մեջ մտցնելու կամ չմտցնելու հարցը, վոր կոմերիտական ժողովը, կոնֆերանսը, համագումարը կազմում է կոմերիտական որդաններում՝ փակ (գաղտնի) քվեարկությամբ ընտրությունները անցկացնելու համար։

Ըստ վորում անհրաժեշտ է հաշվել բացարկման ինչպես «թեր», այնպես էլ «դեմ» բոլոր ձայները։

Այն թեկնածությունները, վորոնց դեմ բացարկումներ չեն ստացվել, բաց քվեարկության չեն դրվում և ցուցակի մեջ են մտցվում ընտրությունները փակ (գաղտնի) քվեարկությամբ անցկացնելու համար։

13. Կոմերիտական որդանների ընտրությունները անցկացնելուց առաջ քվեարկության արդյունքները հաշվելու համար կոմերիտական ժողովը, կոնֆերանսը, համագումարը բաց քվեարկությամբ ընտրում է հաշվիչ հանձնաժողով՝ ժողովի, կոնֆերանսի, համագումարի սահմանած թվով։ Հաշվիչ հանձնաժողովի անդամներն ընտրում են հաշվիչ հանձնաժողովի նախագահ։

Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահը պարտավոր է կոմերիտական ժողովի, կոնֆերանսի, համագումարի դելեգատներին պարզաբանել փակ (գաղտնի) քվեարկությունն անցկացնելու կարգը։

Հաշվիչ հանձնաժողովը նախքան փակ քվեարկության անցնելը պարտավոր է պատրաստել ընտրական արկղներ և անձամբ այն կնքել կամ փակել կողպեքով։

14. Փակ (գաղտնի) քվեարկությունը կոմերիտական որդանի ընտրությունների ժամանակ պետք է անցկացվի կոմերիտական կոնֆերանսի, համագումարի փակ նիստում միմիայն վճռական ձայնի իրավունք ունեցող դելեգատների ներկայությամբ։ Կոմերիտական վերադաս որդանների ներկայացուցիչներն իրավունք ունեն ներկա գտնվել կոմերիտական կոնֆերանսների, համագումարների, ժողովների ինչպես դռնբաց, այնպես էլ դռնփակ նիստերում։

15. Վճռական ձայնի իրավունք ունեցող յուրաքանչյուր դելեգատ ստանում է ժողովի, կոնֆերանսի և համագումարի կողմից կոմյերիտական որգանի կազմի մեջ նշված թեկնածուների ցուցակի մի որինակ։ ՀԱՄԼԿՅԵՄ անդամի դելեգատական մանդատի կամ կոմյերիտական ժողովում, կոնֆերանսում, համագումարում ներկա գտնվողների ցուցակում պետք է նշվի այն մասին, վոր ՀԱՄԼԿՅԵՄ անդամը մասնակցել է քվեարկությանը։

16. Յուրաքանչյուր դելեգատ թեկնածուների ցուցակում փակ (գաղտնի) քվեարկության ժամանակ իրավունք ունի ջնջել առանձին թեկնածուներ կամ նոր թեկնածուներ ավելացնել ղեկավար կոմյերիտական որգանի կազմի մեջ, անկախ այն բանից, թե ինչ քանակությամբ է կոնֆերանսը, համագումարը, ժողովը սահմանել ընտրելու կոմյերիտական որգանը։

17. Քվեարկումից հետո հաշվիչ հանձնաժողովը բացում է ընտրական արկղները և դուրս չգալով ժողովի, կոնֆերանսի, համագումարի շենքից, հաշվում է քվեարկության արդյունքները՝ կոմյերիտական որգանների անդամներին առանձին և կոմյերիտական որգանների անդամության թեկնածուներին առանձին։ Հաշվիչ հանձնաժողովը պարտավոր է հաշվել բոլոր «թեր» և «դեմ» ձայները՝ յուրաքանչյուր թեկնածուին առանձին։

Ձայները հաշվելուց հետո հաշվիչ հանձնաժողովը կազմում է արձանագրություն, վորի մեջ մտցնում է քվեարկության արդյունքները յուրաքանչյուր թեկնածուին առանձին և հանձնաժողովի բոլոր անդամներն ստորագրում են այդ արձանագրությունը։

Այն շենքում, վորտեղ կատարվում է հաշվելը, վոչ վոք իրավունք չունի գտնվել, բացի հաշվիչ հանձնաժողովի անդամները։

18. Հաշվիչ հանձնաժողովը կոմյերիտական կոնֆերանսի, համագումարի, ժողովի նիստում զեկուցում է քվեարկման արդյունքը՝ յուրաքանչյուր թեկնածուին առանձին։ Կոմյերիտական որգանի կազմի մեջ ընտրված են համարվում այն թեկնածուները, վորոնք ստացած քվեարկվող թեկնածուների և կոմյերիտական ժողովում, կոնֆերանսում, համագումարում ներկա գտնվող վճռական ձայնի իրավունք ունեցողների կեսից ավելիի նկատմամբ ստացել են ձայների մեծամասնություն։

19. Փակ (գաղտնի) քվեարկության բոլոր նյութերը (թեկնածուների ցուցակները, գրավոր դիմումները, քվեարկման հաշիվները և այլն) պետք է պահվեն կոմյերիտական որգաններում՝ գաղտնի փաստաթղթերի իրավունքներով։

ՀԱՅԿ. ՀԱՆՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
Հանրային գրադարան
ՀՍՍՀ-ՍՍՀ
Ա. Մասիսյան
3556
40

Թողարկման պատասխանատու՝ Գ. ՇԱՀՅԱՆ

ԱԴՐԼԿՅԵՄ ԿՈՆՏՈՒՐ
Մանկական յեվ յերիտասարդական գրականության
հրատարակչություն

Сдано в набор 12/VIII 1940 г.
Подписано к печати 15/VIII 1940 г.
3/8 печ. лист. уч. авт. л. 5/8 24.980 ти

Главлит № 6003. Заказ № 17
Типогр. „Кр. Восток“, Баку, ул.

ՀՀ Ազգային գրադարան
NL0195455

20

31157

ЗКСМЗ
2-21